ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

N 13/5010-19
11 03 2019թ.

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3
հեռ. (+374 10) 201461

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**
(ք. Երևան, Բուզանդի 1/3, 4 հարկ)

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 341-66 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ Օրենք) 61 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանի մասնակի տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, պետական գրանցման տարին, ամիսը, օրը, իրավաբանական անձի գրանցման համարը, իրավաբանական անձի հիմնադիրները, իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելը) տրամադրվում են առանց պետական տուրք վճարելու:

Տեղեկացնում եմ, որ 2018 թվականի մայիսի 11-ին Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ Գործակալություն) Կապանի տարածքային սպասարկման գրասենյակից քաղաքացի՝ Սիլվա Բալայանին տրամադրվել է «ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ապահովման վարչություն» հիմնարկի (հաշվառման համար՝ 271.0094, հաշվառման օր՝ 19.03.1999թ.) վերաբերյալ այդ օրվա դրությամբ պետական միասնական գրանցամատյանում գրառված ամբողջական տեղեկատվությունը:

Տեղեկացնում եմ նաև, որ Գործակալությունը տրամադրված տեղեկություններից բացի այլ տեղեկությունների չի տիրապետել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ